105	5	<p>Գիտելիքի ամրակալում: Ածանցներ</p> <p>1. Տրված ածանցներով և արմատներով կազմել նոր բառեր:</p> <p>2. Տրված ածանցներով(-վոր, -որդ, -իչ, -պան, -ային, -ական, -աբան, -գործ) գրել զբաղմունք, մասնագիտություն ցույց տվող բառեր:</p> <p>3. -ոց, -անոց, -արան, -ստան, - ուտ, ածանցներով գրել գործողության կատարման կամ մի բանով հարուստ տեղ ցույց տվող բառեր:</p> <p>4. Տրված ածանցներով կազմել նույնարմատ հականիշներ (ստորադասվերադաս, հասուն-տհաս):</p> <p>5. Խաչբառ ածանցավոր բառերով:</p>	<p>Բառի բաղադրիչների ընկալում:</p> <p>Բառապաշարի հարստացում:</p> <p>Ուղղագրություն:</p>			<p>Խորհրդատու աշակերտ, Առաջատարի գլխարկ, T-ածն աղյուսակ, խաչբառ</p>	<p>Վարժ. 5,7(էջ120-121):</p>
106	6	<p>Սևանա լիճը (ըստ Վ. Անանյանի)</p> <p>1.Սևանի վերաբերող շրջասույթներ:</p> <p>2. Գեղարվեստական տեքստի ընթերցում:</p> <p>3. Բառաշարքի կազմում (Սևան):</p> <p>4. Ծովանկարչություն:</p> <p>5. Սևանը պատկերող նկարների դիտում. Բաշինջաղյան, «Անդորրություն», «Սևանա լիճը», «Անձրևային օր Սևանում», «Սևանա լիճն անդորր գիշերով», Այվազովսկի:</p>	<p>Բնանկարի գեղարվեստական արժեքի գիտակցում, ծանոթություն ծովանկարչությանը:</p>	<p>Այցելություն Հայաստանի պետական պատկերասրահ Կերպարվեստ Երաժշտություն Սևանի մասին երգերի ունկնդրում</p>	<p>Լիճը պատկերող նկարներ</p> <p>Բաշինջաղյան Այվազովսկի</p>	<p>Մտազրոհ, Խճանկար, Զբոսանք պատկերասրահում</p>	<p>Կարդալ: Սևանի մասին տեղեկություններ, բանաստեղծություններ, արձակ գործեր գտնել:</p>
107	7	<p>Սևանա լիճ (ըստ հանրագիտարանի)</p> <p>1. Աշակերտների տեղեկությունները Սևանի մասին:</p> <p>2. Տեքստի ընթերցում:</p> <p>3. Խմբային քննարկում:</p> <p>Էքսկուրսիա դեպի Սևանա լիճ:</p>	<p>Սևանի արդյունահանական, բնապահպանական, էներգետիկական, տնտեսական, առողջապահական և գեղագիտական նշանակության ըմբռնում:</p>	<p>Աշխարհագրություն Մաթեմատիկա Բնագիտություն</p>		<p>Ինսերտ, համատեղ որոնում, ճիշտ և սխալ պնդումներ</p>	<p>Ռեֆերատ Սևանա լիճ... մասին (գիտական շարադրանք):</p>

1	2	3	4	5	6	7	8
108	8	<p>Գեղարվեստական և գիտական խոսք</p> <ol style="list-style-type: none"> Գիտական խոսքի գործածման ոլորտները, նպատակը: Գիտական խոսքի առանձնահատկությունները: Գեղարվեստական խոսքի նպատակը: Գեղ. խոսքի կերտման միջոցները: Սևանի մասին անցած երկու տեքստերի համեմատություն, եզրակացությունների գրառում: 	Գեղարվեստական և գիտական խոսքի տարբերակում:			Խճանկար, համատեղ որոնում	Առաջադրանք 4(էջ124):
109	9	<p>Գեղարվեստական նկարագրություն և գիտահանրամատչելի ակնարկ</p> <ol style="list-style-type: none"> Որոշել տրված տեքստերի բնույթը: Սևանի գեղ. բնանկարի ստեղծման փորձ: Սևանի մասին հավաքած վերլուծությունների հիման վրա գիտական ոճով տեքստի ստեղծում (Սևանի արդյունահանական, բնապահպանական, էներգետիկական, տնտեսական, առողջապահական և գեղագիտական ըմբռումների, ջրերի մակարդակի նվազման՝ որպես էկոլոգիական աղետի պատճառի գիտակցման լույսով): 	Գիտահանրամատչելի ակնարկի և գեղարվեստական նկարագրության տարբերակում: Բնանկարի գեղ. արժեքի գիտակցում, հավաքած փաստերի քննարկում և վերլուծության արդյունքների և եզրակացությունների գրավոր շարադրանք գիտական ոճով			Հաղորդում, գեկուցում գիտական ոճով, խմբային աշխատանք	Վարժ. 5 (էջ124):
110	10	<p>«Ու՞ր է կղզակն Սևանա»</p> <ol style="list-style-type: none"> Տեքստի ընթերցում: Վերնագրի մեկնաբանություն: Հատվածների վերնագրում և մեկնաբանություն: Արփա-Սևան ջրատարի կառուցումը որպես լճի փրկության հույս: Սևանի ավազանի մաքրության պահպանումը որպես յուրաքանչյուր քաղաքացու պարտք: 	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:			Ընթերցում դադարներով, ընթերցում զույգերով	Առաջ. 2 (էջ127):
111	11	<p>Սևանա լճի խնդիրները</p> <ol style="list-style-type: none"> Խնդիրների ձևակերպում: Գիտական ոճով բանավորելույթներ: Խնդրի լուծման վերաբերյալ առաջարկ-նախագծի ստեղծում: 	Կարծիք հայտնելու, գիտ. ոճով բանավորելույթ ունենալու կարողությունների զարգացում:			Խմբային աշխատանք	Առաջ. 4 (էջ127:)

1	2	3	4	5	6	7	8
112	12	Գործնական աշխատանք ստեղծել ավրոն «Փրկենք Սևանը» կազմել Արարատի մասին բանաստեղծությունների գրքույկ (լուսանկարների օգտագործմամբ):					
113	13	Ս. Կուրտիկյան. «Գեղամա լեռներ, Գեղամա ծով» 1. Գեղամա լեռներ, Գեղամա ծով: 2. տեստի ընթերցում: 3. Բառային աշխատանք: ԲԱ 1,3,4,6 (էջ129):	Բարձրաձայն հասկանալի և արտահայտիչ ընթերցելու կարողության ամրապնդում:			Մտազրոհ, կանխագուշակությունների աղյուսակ	Կարդա: ԲԱ 2,5 (էջ130):
114	14	Զրույցի սյուժեն և բովանդակությունը 1. Ընտրովի հատվածների ընթերցում: 2. Պլանի կազմում հարցական նախադասություններով: 3. Գաղափարական բովանդակությունը: 4. ՏԱ 2-7(էջ 129-130):	Յուրացված բառապաշարը սեփական խոսքում օգտագործելու կարողության զարգացում:			Համառոտ և մանրամասն պատում, պատում հերոսների անունից:	Պատմել: ՏԱ 8 (էջ130):
115	15	Խոսքի զարգացում փոխադրություն «Գեղամա լեռներ, Գեղամա ծով»					
116	16	Վ. Դավթյան. «Լիճը» 1. Բանաստեղծության ընթերցում: 2. ԲԱ 1-3(էջ130): 3. ՏԱ 1-3 (էջ131): 4. Պատկերային համակարգը. փոխաբերություններ:	Բանաստեղծության արտահայտիչ ընթերցում, բովանդակային և լեզվա-ոճական վերլուծություն:			Քառաբաժան	Անգիր: Գտնել տեղեկություններ Արագած լեռան մասին:
117	17	Արագած լեռ 1. Ի՞նչ գիտենք Արագածի մասին: 2. Տեքստի ընթերցում: 3. Կարմիր գրված բառերի բացատրություն: 4. Ի՞նչ նշանակություն ունի Արագածը Հայաստանի համար: 5. Գիտաբառերը տեքստում:	Գիտական տեքստի ըմբռնման, վերարտադրման և ինքնուրույն շարադրանք կազմելու կարողությունների խորացում: Ճանաչողական դաշտի ընդլայնում:	Աշխարհագրություն Մաթեմատիկա Բնագիտություն		Ինսերտ Խճանկար ընթերցում զույգերով	Առաջ. 6,7(էջ132):

1	2	3	4	5	6	7	8
118	18	Ավ. Իսահակյան. «Արագածին» 1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բառային աշխատանք: 3. Թեմատիկ բառաշարքի կազմում:	Բանաստեղծության վերլուծություն: Գեղարվեստական և գիտական ոճերի տարբերությունների ընկալում: Բնագրային աշխատանք:	Կրկն. Իսահակյան, «Գետակի վրա թեքվել է ուռին» (5-րդ դաս.)	Բաշինջաղյան, Սարյան Թերլեմեզյան «Արագածը ձմռանը», Կոջոյան «Արագածը Երևանից»	Բազմանիստ, Քառաբաժան Բանալի բառեր	Կարդալ: ԲԱ 3(էջ134), ՏԱ 3 (էջ135):
119	19	Բանաստեղծության գեղարվեստական արժանիքները 1. Բանաստեղծության կառուցվածքը: 2. Հանգ, մակդիր, համեմատություն: 3. Կրկնակի գրառումների օրագիր (բանաստեղծության յուրաքանչյուր տան համար գիտական ոճով շարադրանք կազմել կամ գտնել համապատասխան հատված «Արագած լեռ» տեքստից): Համեմատել գրառումները: Ներկայացնել դիտարկումները:	Գեղարվեստական և գիտական ոճերի տարբերությունների ընկալում: Բնագրային աշխատանք:			Դ-աձև աղյուսակ Հնգյակ Կրկնակի գրառումների օրագիր	Անգիր:
120	20	Ե. Պետրոսյան. «Ղու՝ չցնդող տեսիլք» 1. Արտասանության ինքնուրույն գնահատում: 2. Բանաստեղծության ընթերցում: 3. Բառային աշխատանք: ԲԱ 4 (էջ134): 4. պատկերային համակարգը: 5. Արագածի բնանկարի ստեղծման փորձ	Բանաստեղծության վերլուծություն: Գեղարվեստական ոճով նկարագրության ստեղծում՝ սովորած բառապաշարի օգտագործմամբ:			Քառաբաժան	Անգիր: Շարադրություն Արագածի մասին:
121	21	Ս. Կուրտիկյան. «Արագածի չորս կատարները» 1. Շարադրությունների ընթերցում, քննարկում և գնահատում: 2. Տեքստի ընթերցում: 3. Բառային աշխատանք: ԲԱ 1,4 (էջ137): 4. ՏԱ 4,5 (էջ 138):	Բարձրաձայն հասկանալի և արտահայտիչ ընթերցելու կարողության ամրապնդում:	Կրկն. Զրույց		Կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ԲԱ 2,3 (էջ137): Հրաբխի գիտական բացատրություն:

1	2	3	4	5	6	7	8
122	22	Քույրերի անձնագրիությունը 1. Ընտրովի հատվածների ընթերցում: 2. Հարցերի կազմում: 3. Տեքստի բաժանում հատվածների և վերնագրում: 4. Պատմել հատվածները: 5. SU 3-6 (էջ138):	Կարդացած տեքստն ընկալելու, վերապատմելու, թեմայի վերաբերյալ հարցեր կազմելու և հարցերին պատասխանելու կարողությունների ամրապնդում:			Մանրամասն և համառոտ պատում Հարցերով բանկետով 3 բանալի և 1 կողպեք	Պատմել: ԲԱ 6 (էջ138):
123	23	Թեմատիկ փոխադրություն					
124	24	Նախածանցներ 1. Ի՞նչն է նախածանցը: 2. Բառին դրական կամ ժխտական իմաստ հաղորդող նախածանցներ: 3. Հայերենի նախածանցները և նրանց իմաստները: 4. Գործնական աշխատանք: Վարժ. 2-4 (էջ140):	Բառի բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում:	Կրկն.-Բառի բաղադրիչները, ածանցների տեսակները		Իններտ Անհատական կիսմբային աշխատանք	Վարժ. 1(էջ140):
125	25	Գիտելիքի ամրակայում. նախածանցավոր բառեր 1.Տեքստից դուրս գրել նախաածանցավոր բառերը: 2. Ձախ սյունակի նախածանցավոր և աջ սյունակի համապատասխան բառերով կազմել նախածանցավոր բառեր: 3. Տրված բառերը ենթարկել բառակազմական վերլուծության: 4. Կետերի փոխարեն գրել նախածանցներ: 5. Տրված նախածանցներով կազմել նույնարմատ հականիշներ (ներ- -բաց, համ(ա)- -տար(ա), արտ- -վեր, արտա- -ներ, համա- -հակա): 6. Տրված ածանցավոր բառերով գտնել դարձվածքներ (անպոչ գրալ):	Բառի բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում:			Քարտային աշխատանք, օգնական կամ խորհրդատու աշակերտ	Վարժ. 5,6 (էջ 140):
127	27	Արտադասարանական ընթերցանություն: Վ.Անանյան. «Հովազաձորի գերիները» Ռ.Պատկանյան. «Արաքսի արտասուքը»		Կրկն. «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Հայկ և Բել»			

1	2	3	4	5	6	7	8
		ԻՍ ԵՐԿՐԻ ՈՍՏԱՆՆԵՐԸ	(10ժամ)				
128	1	Է.Ավագյան.«Արտաշես և Սաթենիկ» 1.Տեքստի ընթերցում: 2. Բառային աշխատանք: ԲԱ 1,3,6,7 (էջ 149):	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:			Կանխագուշակությունների աղյուսակ Ընթերցում դադարներով	Կարդալ: ԲԱ 4,5 (149):
129	2	Ջրույցի սյուժեն 1. Տեքստի ընթերցում դադարներով: 2. Հատվածների վերնագրում: 3. Տեղեկություններ Արտաշեսի մասին: 4. ՏԱ 3,6,7 (էջ 149):	Բարձրաձայն արտահայտիչ կարդալու ունակությունների, տեքստը մասերի բաժանելու և դրանք վերնագրելու կարողությունների զարգացում:			Ընթերցում դադարներով	Պատմել: Դուրս գրել Արտաշեսին և Սաթենիկին բնութագրող հատվածները:
130	3	Արտաշեսի և Սաթենիկի կերպարները 1 Տեքստը պատմել, պատասխանել հարցերի: 2. Բնութագրել Արտաշեսին և Սաթենիկին՝ օգտագործելով տեքստի բառերն ու արտահայտությունները. ա. Արտաշեսը որպես հայոց թագավոր, զինվոր, հայրենիքի շենացման, արվեստի ու արհեստների զարգացման համար մտահոգ մարդ, սիրող և ուշադիր ամուսին, բ. Սաթենիկը գեղեցկության, կանացիության, խելամտության մարմնացում:	Կերպարները բնութագրելու կարողության զարգացում:			Մեկնողական և դատողական, մանրամասն և համառոտ պատում	Անգիր չափածո հատվածները: Գրավոր բնութագրել հերոսներից որևէ մեկին:
131	4	Վերջածանցներ 1. Հայերենի վերջածանցները: 2. Վերջածանցների իմաստները: 3. Գործնական աշխատանք: Վարժ. 2,5 (էջ 151):	Բառի բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում:	Կրկն.-Բառի բաղադրիչները, ածանցների տեսակները		Ինսերտ Խմբային աշխատանք	Վարժ. 1,3 (151)

1	2	3	4	5	6	7	8
132	5	<p>Գիտելիքի ամրակայում. Վերջածանցներ: Թելադրություն</p> <p>1.Տրված ածանցներով և արմատներով կազմել նոր բառեր: 2.Տեքստից դուրս գրել վերջածանցավոր բառերը: 3.Բառակազմական վերլուծություն կատարել: 4.Շարքից դուրս գրել այն բառերը, որոնք նոր բառ են կազմում ... (-ական, -ային...) ածանցներով: 5. Տրված վերջածանցավոր բառերով գրել դարձվածքներ: 6.Բառեր կազմել տրված կաղապարներով:</p>	Բառերի բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում:			Քարտային աշխատանք Օգնական աշակերտ	Վարժ. 4,6,7 (էջ 151-152):
133	6	<p>Պ.Սևակ. «Էրեբունի-Երևան»</p> <p>1.Բանաստեղծության ընթերցում: 2. Բառային աշխատանք, Երևանը ներկայացնող բառերի դուրսգրում: 3. Երգի ունկնդրում: 4. Պատկերային համակարգը:</p>	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն: Երգի ունկնդրում:	Կերպարվեստ Երաժշտություն Աշխարհագրություն Սևակ, «Ջրերի լեզուն» (5-րդ դ.), «Հայաստան» (6-րդ դաս.)	Լուսանկարներ Էդգար Հովհաննիսյան	Զրույց Հնգյակ Բազմանիստ Քառաբաժան Զբոսանք պատկերասրահում	Անգիր: ԲԱ 2,5 (էջ 155):
134	7	<p>Հ.Սահյան. «Երևան»</p> <p>1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բառային աշխատանք: 3. Կազմել բառաշարք. ի՞նչ էլիք լինի առանց Երևան, ի՞նչ է Երևանը հայերի համար: 4. Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը: Պատկերային համակարգը. մակդիր, փոխաբերություն, հանգ, կրկնություն:</p>	Միևնույն առարկան տարբեր հատկանիշներով բնութագրելու կարողության զարգացում:			Խմբային աշխատանք	Կարդալ: ԲԱ 3 (էջ155):
135	8	<p>Ա. Կիրակոսյան. «Ես կարծում էի...»</p> <p>1. Գաղափար ազատ բանաստեղծության մասին: 2. Բանաստեղծության ընթերցում: 3. Բառային աշխատանք: 4. Նկարագրել բանաստեղծուհու առաջին այցելությունը Երևան: 5. Երևանը պատկերող նկարների, լուսանկարների դիտում:</p>	Քնարական բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն:	Նկարչություն Քանդակագործություն Երաժշտություն Կրկն.-Ա. Կիրակոսյան, «Նամակ առ Հայաստան» (5-րդ դաս.)		Զրույց Հնգյակ Բազմանիստ Քառաբաժան Զբոսանք պատկերասրահում	Անգիր: ԲԱ 4 (էջ155):

1	2	3	4	5	6	7	8
137	10	Արտադասարանական ընթերցանություն. «Տիգրան և Ածիահակ»					Տեղեկություններ Մատենադարանի մասին:
		ԻՄ ԵՐԿՐԻ ԳՐՔԵՐԸ. ԻՄ ԳՐՔԵՐԸ (13 ժԱՍ)					
138	1	Վ. Պետրոսյան. «Հայկական էսքիզներ» 1. Զրույց սիրած գրքերի մասին: Ինչպե՞ս են մեզ հասել ձեռագիր գրքերը: Մատենադարան: 2. Տեքստի ընթերցում և մեկնաբանություն: 3. ՏԱ 3-5 (էջ160), ԲԱ (էջ159): 4. Այլ ավանգազրույցներ մեր վանքերի մասին:	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:	Մատենադարան		Զրույց Ընթերցում գույզերով	Կարդալ, պատմել: ԲԱ 1,2 (էջ159):
139	2	«Հայկական էսքիզներ»: Վերջածանցներ 1. Վարժ. 1,2,3,5 (էջ161): 2. Կազմել բառաշարք -արան վերջածանցով:	Բառի բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում: Ուղղագրություն:			Քարտային աշխատանք Խաղ. ո՞վ ավելի շատ բառեր կգրի տրված վերջածանցներով:	«Հայկական էսքիզներ» տեքստից դուրս գրել վերջածանցավոր բառերը:
140	3	Գիտելիքի ամրակայում: Թելադրություն					
141	4	Մ.Սարգսյան. «Նարեկացի» 1. Ո՞վ է Նարեկացին: 2. Տեքստի ընթերցում: 3. Բառային աշխատանք: ԲԱ 1,3,4 (էջ 164)	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:	Ավանդազրույցներ մեր վանքերի մասին:		Ընթերցում դադարներով	Կարդալ: ԲԱ 2 (էջ 164)
142	5	Անկրկնելի Ավետարանը և Գրիգորը 1. Տեքստի հատվածների ընթերցում, վերնագրում: 2. Պատմել՝ ըստ վերնագրված հատվածների: 3. ՏԱ 1-5 (էջ 165)	Ընթերց. շնորհիվ յուրացված բառապաշարը սեփական խոսքում գործածելու կարողության ամրապնդում:				Պատմել
143	6	Ա.Ղանալանյան. «Սուրբ Գրիգոր Նարեկացի» 1.Տեքստի ընթերցում: 2.Բառային աշխատանք: ԲԱ 1 (էջ 166) 3.ՏԱ 1-5(էջ 166) 4.Դուրս գրել վերջածանցավոր բառերը:	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:			Ընթերցում դադարներով Ընթերցում գույզերով	Պատմել: ԲԱ 1 (էջ 166)

1	2	3	4	5	6	7	8
145	8	<p>Գիտելիքի ամրակայում: Բառակազմություն</p> <p>1.Բառաշարքից առանձնացնել նույնարմատ բառերը:</p> <p>2.Կազմել նոր բառեր՝ տրված արմատները դարձնելով առաջին (վերջին) բաղադրիչ:</p> <p>3.Կազմել նոր բառեր՝ հնչյունափոխելով տրված արմատները:</p> <p>4.Չախ սյունակի ածանցները միացնելով աջ սյունակի արմատներին՝ ստանալ նոր բառեր:</p> <p>5.Գտնել տրված բառերի այն արմատները, որոնք կարող են հնչյունափոխվել բառակազմության ժամանակ:</p> <p>6.Գտնել հնչյունափոխված արմատները, վերականգնել անհնչյունափոխ ձևերը:</p> <p>7.Կազմել անհոդակապ կամ հոդակապով բարդություններ տրված արմատներով:</p> <p>8.Պատասխանի ճիշտ տարբերակի ընտրության հետ կապված հարցեր:</p>	Անսխալ գրել բաղադրյալ բառերը, գտնել հնչյունափոխված արմատները	Հնչյունափոխություն		Քարտային աշխատանք Խմբային և անհատական աշխատանք	Վարժ. 6,7 (168)
146	9	Թեմատիկ թելադրություն					
147	10	<p>Ա.Այվազյան. «Գրախանութ»</p> <p>1.Տեքստի ընթերցում:</p> <p>2.Բառային աշխատանք: ԲԱ 1, 4, 5 (էջ 172)</p>	Արժեքային համակարգի ձևավորում: Բարձրաձայն հասկա-նալի և արտահայտիչ ընթերցում:			3 բանալի և 1 կողպեք Կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ԲԱ 2,3 (էջ 172)
148	11	<p>Առաջին անարդարությունը</p> <p>1.Տեքստը բաժանել հատվածների և վերնագրել:Արտահայտիչ ընթերցանություն:</p>					
149	12	<p>Արտադասարանական ընթերցանություն</p> <p>Սթիվենսոն, «Գանձերի կղզին»</p> <p>Դյունա, «Երեք հրացանակիրներ»</p>					
150	13	Զրույց՝ «Իմ երկրի գրքերը» թեմայով					

1	2	3	4	5	6	7	8
		ԻՄ ԵՐԿՐԻ ՊՈՒՅՆԵՐԸ (6 ԺԱՍ)					
151	1	Կին Բակչի. «Մատյանը» 1.Տեքստի ընթերցում: 2.Բառային աշխատանք: ԲԱ 1,2,5 (էջ 174): Գտնել բարդ բառերը: 3.Մանրանկարչության որևէ օրինակի ուսումնասիրություն և նկարագրություն: 4.ՏԱ 2-5 (էջ 175):	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:	Կերպարվեստ Երաժշտություն		Քառաբաժան Հնգյակ	Կարդալ, ներկայացնել: ԲԱ 3,4 (էջ 174):
152	2	Վ.Խեչումյան. «Գլուխգործոց» 1.Տեքստի ընթերցում: 2.Բառային աշխատանք: ԲԱ 1,2 (էջ 181)	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:	Կրկն. -Զրույց, պատմվածք		Ընթերցում դադարներով, Քառաբաժան Կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ԲԱ 3,4,5 (էջ181):
153	3	Երիցակ ծաղկողն ու Մոմիկը 1.Տեքստը բաժանել հատվածների և վերնագրել: 2.Մեծահամբավ նկարիչն ու որբուկը: ՏԱ 4 (էջ 181): 3.Մատյանը նկարագրողելու նախապատրաստական աշխատանքները: 4.Աշխարհում գեղեցիկի որոնումները: 5.Մագաղաթ չծաղկած աղոթագիրքը. աշխարհի հնչյունները: 6.Ձմեռ: Մատյանի էջերից արձակվող պայծառ ուրախությունը: 7.Գորգիկ վաճառականի գնահատականը: 8.Մշուշոտ պատմություն:ՏԱ 6 (էջ 181): 9.Գիրքը վաճառելու մերժում: Սերունդները և պատմությունը: 10.ՏԱ 7 (էջ 181):	Տեքստի բովանդակա-յին վերլուծություն: Մանրամասներ ավելացնելու և կարդացածը սեփական բառերով վերապատմելու հմտությունների ամրապնդում:	Մանրանկարչություն Երաժշտություն		Հարց ու պատասխան մեկնողական ու դատողական պատում	Ժամանակ: ԲԱ 5,6 (էջ 181)
154	4	Պատմվածքի գեղարվեստական արժանիքները 1.Դարձվածքները և պատկերավոր արտահայտությունները տեքստում: 2.Մակդիր, փոխաբերություն, համեմատություն: 3.Զրույց, պատմվածք, նրանց նմանություններն ու տարբերությունները:	Տեքստի լեզվառճական վերլուծություն: Գրականագիտական գիտելիքների խորացում:			Խմբային աշխատանք	Դուրս գրել բարդ բառերը:

1	2	3	4	5	6	7	8
155	5	<p>Քարդ բառերի տեսակները</p> <p>1. Համադրական և հարադրական բարդություններ:</p> <p>2. Հոդակապով, անհոդակապ, և-ով կամ ու-ով միացված բաղադրիչներով համադրական բարդություններ:</p> <p>3. Հարադրական բարդություններ. կրկնավորներ: Հնչյունափոխություն:</p> <p>4. Վարժ. 1 (էջ 184):</p>	Բառի կառուցվածքի ընկալում, նրա բաղադրիչ տարրերի ձանաչում, բառապաշարի հարստացում	Կրկն. -Բառերի տեսակներն ըստ կազմության, հնչյունափոխություն		Խճանկար	Վարժ 2,3 (էջ 184):

1	2	3	4	5	6	7	8	
156	6	<p>Գործնական աշխատանք բարդ բառերի տեսակների շուրջ</p> <p>1. 10-ական բառ կազմել <i>տուն, ծաղիկ</i> վերջնաբաղադրիչներով, և <i>ջուր, օդ</i> սկզբնաբաղադրիչներով:</p> <p>2. Կազմել անհոդակապ բառեր՝ որպես վերջնաբաղադրիչ օգտագործելով <i>երգ, իմաստ, ընտիր, ուղի</i> բառերը:</p> <p>3. Տրված արմատների կրկնությամբ կազմել բարդ բառեր:</p> <p>4. Հարադրություններ կազմել տրված բառերով՝ <i>նետ, աղմուկ, անուն, շաշյուն, սեղան, գենք...</i></p> <p>5. Գրել հարադրություններ՝ բաղադրված հոմանիշներով (անթիվ-անհամար), հականիշներով (տալ-առնել):</p> <p>6. Տրված բառակապակցություններն արտահայտել մեկ բառով:</p> <p>7. Պատասխանի ճիշտ տարբերակի ընտրության հետ կապված առաջադրանքներ:</p>	Բառի կառուցվածքի ընկալում, նրա բաղադրիչ տարրերի ձանաչում, բառապաշարի հարստացում				Անհատական և խմբային աշխատանք T-աձև աղյուսակ Գրաֆիկական պատկեր	Վարժ 5,6,7 (էջ 184):
		ԻՄ ԵՐԿՐԻ ԵՐԳԵՐԸ_ (7 ժԱՄ)						
157	1	<p>Մ.Գալշոյան.«Կռունկ»</p> <p>1. Սիրելի երգեր: Զրույց:</p> <p>2. Ի՞նչ գիտենք Կոմիտասի մասին:</p> <p>3. Տեքստի ընթերցում:</p> <p>4. Բառային աշխատանք: ԲԱ 1 /էջ 191/</p>	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում: Երգի ունկնդրում:	Կոմիտաս, «Կռունկ» Երաժշտություն Աշխարհագրություն		Զրույց, Մտագրոհ, Կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ԲԱ 2, 3/էջ 191 /	

1	2	3	4	5	6	7	8
158	4	<p>Կոմիտասը Սպիտակ կղզում</p> <p>1. Հատվածների բաժանել տեքստը, ընթերցել և վերնագրել:</p> <p>2. Տեքստի սյուժեն ըստ հատվածների վերապատմելու փորձ:</p> <p>3. Տրված բառերը /տարաշխարհիկ, արևմուտք, իրիկնապահ .../ ենթարկել բառակազմական վերլուծության:</p>	<p>Տեքստը ունկնդրելու, ընկալելու, վերապատմելու կարողությունների ամրապնդում:</p>	<p>Աշխարհագրություն</p>		<p>Մանրամասն և դատողական պատում, հարցազրույց հերոսների հետ</p>	<p>Պատմել: ԲԱ 4, 5 /էջ 191/</p>
159	3	<p>Օտարն ու հայ երգը</p> <p>1. Կոմիտասը հայ երգի Մեսրոպ Մաշտոց: Կոմիտասի մասին տեղեկությունների ընթերցում:</p> <p>2. Կոմիտասը Անգլիայում՝ Սպիտակ կղզում: Մեծ երգահանի ողիսականը:</p> <p>3. Անհանգիստ մարդը:</p> <p>4. Ճաշի հրավեր:</p> <p>5. Ընթրիքն ու անկաշկանդ զրույցը:</p> <p>6. Կարոտի երգը:</p> <p>7. Իռլանդուհին և հայը:</p> <p>8. ՏԱ 2-7 /էջ 192/:</p>	<p>Տեքստի վերաբերյալ հարցեր կազմելու և դրանց պատասխանելու կարողության ամրապնդում:</p>	<p>Տերյան. «Մեզ չի հասկանա սառն օտարուհին...» Շրջասույթ</p>			<p>SU 8 /էջ 192/:</p>
160	4	<p>Միասին, անջատ և գծիկով գրվող բառեր</p> <p>1. Միասին, անջատ և գծիկով գրվող բառեր:</p> <p>2. «Կռունկ» պատմվածքից դուրս գրել կապույտ գրված բառերը, լրացնել աղյուսակը, բացատրել ուղղագրությունը:</p> <p>3. Տրված բառերը գրել միասին, անջատ կամ գծիկով:</p> <p>4. Պատասխանի ճիշտ տարբերակի ընտրության հետ կապված առաջադրանքներ:</p>	<p>Ուղղագրություն: Բառապաշարի հարստացում:</p>			<p>Խճանկար Աղյուսակներ</p>	<p>Վարժ. 1,4 /էջ 194/:</p>
161	5	<p>Վարժություններ միասին, անջատ և գծիկով գրվող բառերի շուրջ</p> <p>1. Տրված արմատների կրկնությամբ կազմել նոր բառեր:</p> <p>2. Հետևյալ բառերը միացնելով՝ կազմել բարդ բառեր, որոշել ուղղագրությունը. հարավ արևելք յան, հարավ-արևելք, հարավարևելյան,:</p>	<p>Ուղղագրություն: Բառապաշարի հարստացում:</p>			<p>Խմբային և անհատական աշխատանք</p>	<p>Վարժ. 2,3 /էջ 194/:</p>

		3.Դարձվածքներ միասին անջատ, գծիկով գրվող բարդ բառերով:					
162	6	Գիտելիքի ամրակայում: Հարցաշար	Ուղղագրություն: Բառապաշարի հարստացում			Քարտային աշխատանք Օգնական կամ խորհրդատու աշակերտներ	Վարժ. 5, 6 /էջ 194/:
163	7	Արտադասարանական ընթերցանություն					
		ԻՄ ԵՐԿՐԻ ՔԱՐԵՐԸ (17 ժԱՄ)					
164	1	Ա.Բիտով. «Մատենադարան» 1.Ի՞նչ գիտենք Մատենադարանի մասին: 2.Տեքստի ընթերցում: 3.Հարցերի կազմում: 4.Մանրամասնել նկարչագրությունը՝ ավելացնելով սեփական դիտարկումները: 5.Բառային աշխատանք: ԲԱ 1-4(էջ196):	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում: Նկարագրությանը մանրամասներ ավելացնելու կարողությունների զարգացում:	Հայկական ճարտարապետություն Լուսանկարեր Կրկն.-Ա.Բիտով, «Հայաստանի դասերը», Կ. Բակչի, «Մատյանը» (6-րդ դաս.)		Մտագրող Ջրույց Ընթերցում դադարներով Ընթերցում զույգերով Հարցուպատասխան	ՏԱ 2(էջ196):
165	2	«Մատենադարան»: Բառարան 1.Շարադրությունների ընթերցում, քննարկում և գնահատում: 2.Բառարանների նշանակությունը: 3.Տեսակները: 4.Բառարանի կառուցվածքը: 5.Հանրագիտարան: 6.Առաջ. 1-4,6,7(էջ198):	Ճանաչողական դաշտի ընդլայնում:	Բառարաններ		Խճանկար	Առաջ.5(էջ198):
166	3	Թեմատիկ հարցաշար					
167	4	Ա.Այվազյան. «Պոեմ վասն շենքի և շինության» 1.Ո՞վ է Թամանյանը: 2.Տեքստի ընթերցում: Վարկածներ. ինչպե՞ս են գետն անցնելու գաղթականները: 3.Բառային աշխատանք: ԲԱ 1/էջ 203/:	Արժեքային համակարգի ձևավորում: Բարձրաձայն հասկանալի և արտահայտիչ ընթերցում: Տեքստի պլան կազմելու հմտությունների ամրապնդում:	Երևանը պատկերող լուսանկարներ Քանդ.- Ա.Թամանյանի արձանը Կրկն.- Ա.Այվազյան, «Գրախանութ»		Մտագրող Ջրույց Ընթերցում դադարներով Կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ԲԱ 2, 3 /էջ 203/: Տեքստը բաժանել հատվածների և վերնագրել:

168	5	<p>Սյուժեն և գաղափարական բովանդակությունը</p> <p>1. Հատվածների ընթերցում: 2. Վերապատում՝ ըստ հատվածների: ԿԱ 3 / էջ 203/:</p> <p>3. Հարց ու պատասխան:</p>	<p>Ընթերցանության շնորհիվ յուրացված բառապաշարի օգտագործում սեփական խոսքում:</p>			<p>Մեկնողական և դատողական պատում Հաստ ու բարակ հարցեր Հարցազրույցներ հերոսների հետ</p>	<p>Պատմել: Ռեֆերատ Ա. Թամանյանի մասին:</p>
169	6	<p>Մեծ ճարտարապետը և հայրենասեր քաղաքացին</p> <p>ԿԱ 4 / էջ 203/: Բնութագրել Թամանյանին՝ այս պատմվածքի սյուժեի վրա հիմնվելով: 2. Ռեֆերատների ընթերցում, քննարկում, գնահատում: 3. Թամանյանի նախագծած և կառուցած շինությունները:</p>	<p>Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար տեղեկատվական աղբյուրներից կարողության զարգացում: Միևնույն առարկան տարբեր հատկանիշներով ներկայացնելու կարողության զարգացում:</p>	<p>Լուսանկարների ցուցադրում</p>		<p>Խմբային և անհատական աշխատանք</p>	<p>ԲԱ 4-7 / էջ 203/</p>
170	7	<p>Հապավումներ</p> <p>1. Ի՞նչ է հապավումը: Բերել օրինակներ: 2. Հապավումների տեսակները՝ տառային մասային, բառային: Օրինակներ: 3. Վարժ. 1-3 / էջ 205/:</p>	<p>Բառի կառուցվածքի ընկալում, նրա բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում:</p>	<p>Աշխարհագրություն</p>		<p>Մտազրոհ Խճանկար</p>	<p>Վարժ. 4,5 / էջ 206/:</p>
171	8	<p>Գիտելիքի ամրակալում. հապավումներ: Թելադրություն</p> <p>1. Տրված բառերից կազմել տառային, մասային, բառային հապավումներ: 2. Բացել տառային հապավումները: 3. Մամուլից դուրս գրել նորագույն հապավումները և բացատրել: 4. Վարժ. 7. / էջ 206/</p>	<p>Բառի կառուցվածքի ընկալում, նրա բաղադրիչ տարրերի ճանաչում, բառապաշարի հարստացում:</p>	<p>Մամուլ</p>		<p>Գլուխկոտրուկ, խաղ</p>	<p>Վարժ. 5, 6 / էջ 206/</p>
172	9	<p>Հ.Սահյան. «Ուր որ նայում եմ»</p> <p>1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բառային աշխատանք: ԲԱ 1,4 / էջ 210/: 3. Բանաստեղծության ազատ շարադրանք: 4. Կապույտ գրված արտահայտությունների բացատրություն: 5. Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը: 6. Պատկերային համակարգը:</p>	<p>Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն: Ընթերցանության շնորհիվ յուրացված բառապաշարի օգտագործում սեփական խոսքում:</p>			<p>Քառաբաժան T-աձև աղյուսակ Խմբային աշխատանք</p>	<p>Անգիր: ԲԱ 2, 3 / էջ 210/: Կեղեկություններ Ջվարթնոցի մասին:</p>

173	10	Վ.Դավթյան. «Զվարթնոցի արծիվը» 1.Ի՞նչ գիտենք Զվարթնոցի մասին: 2. . Բանաստեղծության ընթերցում: 2. Բառային աշխատանք: ԲԱ 1,2 /էջ 210/: 3. Բանաստեղծության ազատ շարադրանք: 4. Պատկերային համակարգ: 5. Բանաստեղծության գաղափարա-կան բովանդակությունը:	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն: Ընթերցանության շնորհիվ յուրացված բառապաշարի օգտագործում սեփական խոսքում:	Կրկն. – Վ.Դավթյան, «Լիճը», «Առաջին հուլի», «Գյուղի առավոտը» /6-րդ դաս./		Քառաբաժան T-աձև աղյուսակ խմբային աշխատանք	Կարդալ: ԲԱ 5-7 /էջ 210/: ՏԱ 2 /էջ 210/:
174	11	Թ. Բոլորչյան. «Քարեր» բանաստեղծությունը 1.Հայկական քարերը: 2.Բանաստեղծության ընթերցում: 3.Բառային աշխատանք: ԲԱ 1,3(էջ210): 4.Բանաստեղծության ազատ շարադրանք: 5.Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը: 6. Պատկերային համակարգը:	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն: Ընթերցանության շնորհիվ յուրացված բառապաշարի օգտագործում սեփական խոսքում:	Լուսանկարներ		Մտագրոհ Քառաբաժան Զբոսանք պատկերասրահում	Անգիր: ԲԱ 8(էջ210):
175	12	Ա.Պարսամյան. «Լռություն է ...»: Համառոտագրություն 1. . Բանաստեղծության ընթերցում: 2. Գործնական աշխատանք: Վարժ. 1,2 /էջ 212/: 3. Պատկերային համակարգ: 4. Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը: 5. Համառոտագրության անհրաժեշտություն: 6. Համառոտագրելու եղանակներն ու կանոնները:	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն: Ուղղագրություն	Կրկն. Ա.Պարսամյան, «Մեր լավաշ հացը» /5-րդ դաս./		Անհատական և խմբային աշխատանք	Անգիր: ԲԱ 3 (էջ212):
176	13	Արտադասարանական ընթերցանություն					Կարդալ, ներկայացնել:

177	14	Շարահյուսական գիտելիքներ: Նախադասության գլխավոր անդամներ	Ծանոթություն նախադասության կառուցվածքին:			Անհատական և խմբային աշխատանք Մտագրոհ	Կազմել նախադասություններ, որոշել գլխավոր անդամները:
178	15	Շարահյուսական գիտելիքներ: Նախադասության երկրորդական անդամներ	Ծանոթություն նախադասության կառուցվածքին:			Անհատական և խմբային աշխատանք Մտագրոհ	Կազմել նախադասություններ, որոշել գլխավոր և երկրորդական անդամները:
179	16	Գիտելիքի ամրակայում: Թելադրություն	Նախադասության գլխավոր և երկրորդական անդամների տարբերակում:				
180	17	Գործնական աշխատանք: Գրել հոդված					
		ԻՄ ԵՐԿՐԻ ԱՆԽՈՍ ԲՆԱԿԻՉՆԵՐԸ (17 ժԱՄ)					
181	1	Ա. Իսահակյան. «Եղնիկը» 1.Տեքստի ընթերցում: 2.Բառային աշխատանք: ԲԱ 1,3,5(էջ215): 3.ՏԱ 5,6(էջ216): 4.Կազմել թեմատիկ բառաշարք:	Արտահայտիչ կարգալու ունակությունների,տեքստը մասերի բաժանելու և վերնագրելու կարողություն. զարգացում:	Կրկն.- Իսահակյան, «Կյանքից թանկ բանը» (5-րդ դաս.),«Արագածին» (6-րդ դաս.)		Կանխագուշակությունն էրի աղյուսակ Ընթերցում դադարներով Քառաբաժան	Կարդալ: ԲԱ 2,4 (էջ215): Բաժանել հատվածների և վերնագրել:
182	2	Անտառի կանչը 1.Պատմվածքի սյուժեն (հատվածների ընթերցում՝ ըստ կազմած պլանի): 2.Սյուժեի զարգացումը նկարագրության միջոցով: 3.Շնկչնկան հովերի կանչը: 4.Փախուստ գերությունից: 5.Հարազատ անտառը: 6.Քնարականությունը պատմվածքում: 7.Կարծիք պատմվածքի մասին:	Երկի մասին կարծիք արտահայտելու կարողությունների ամրապնդում: Խնդրահարույց իրավիճակ:			3 բանալի և 1 կողպեք, մեկնողական և դատողական պատում	Պատմել:ԲԱ 6,7 (էջ215): ՏԱ 4 (էջ215):
183	3	Պատմվածքի գեղարվեստական արժանիքները: Մակդիդ 1.Ի՞նչ է մակդիդը: 2.«Եղնիկը» պատմվածքից դուրս գրել մակդիդները:	Պատկերավորման միջոցների ընկալման, գնահատման և խոսքի մեջ կիրառելու կարողությունների			Մտագրոհ T-աձև աղյուսակ Խմբային աշխատանք	Առաջ. 4,5 (էջ217):

		3.Առաջադրանք 2,3 (էջ217): 4.Տրված բառակապակցություններից դուրս գրել մակդիրակիրները:	ամրապնդում:				
184	4	Նախ. բազմ. անդամներ և դրանց կետադրությունը 1. Կազմել նախադաս.՝ բազմակի անդամներով /գլխավոր և երկրորդական:	Շարահյուսական գիտելիքներ:				
185	5	Գիտելիքի ամրակայում: Բազմակի անդամներ	Շարահյուսական գիտելիքներ:				
186	6	Թեմատիկ թելադրություն					
187	7	Ղ. Մուրադյան. «Մագաթափ գամփռը և աշունը» 1.Տեքստի ընթերցում: 2.Պատմվածքի վերնագիրը: ՏԱ 4 (էջ223): 3.Բառային աշխատանք: ԲԱ 4,5 (էջ223):	Արժեքային համակարգի ձևավորում: Բարձրաձայն հասկանալի և արտահայտիչ ընթերցում:			Կանխագուշակությունների աղյուսակ	Կարդալ: ԲԱ 1-3(էջ222): ՏԱ 3(էջ223):
188	8	Պատմվածքի սյուժեն և բովանդակությունը 1.Հատվածների ընթարդցում և վերնագրում: 2.Տեքստի վերապատմում: 3.Աշունը քաղաքում: 4.Գամփռն ու տղան: 5.Զբոսանք պատկերասրահում:	Տեքստի պլան կազմելու հմտությունների ամրապնդում: Միևնույն առարկան տարբեր հատկանիշներով ներկայացնելու կարողության զարգացում: Արժեքային համակարգի ձևավորում:	Կերպարվեստ	Երեխաների նկարները	Զբոսանք պատկերասրահում Մեկնողական և դատողական պատում	Պատմել: ԲԱ 5,6, ՏԱ 5 /էջ 223/:
189	9	Պատմվածքի գեղարվեստական արժանիքները: Համեմատություն: 1. Համեմատություն:Նկարել համեմատություն: 2.Համեմատությունները պատմվածքում: 3.Առաջադրանք 1,3,5 /էջ 224/:	Պատկերավորման միջոցների ընկալման, գնահատման և խոսքի մեջ կիրառելու կարողությունների ամրապնդում:	Կերպարվեստ		Խմբային և անհատական աշխատանք	Առաջադրանք 2,4 /էջ 224/:
190	10	Կիսամյակային ամփոփիչ աշխատանք					

191	11	Ռ. Ղափոյան. «Երկու փոքրիկ շնիկները» 1.Բանաստեղծության ընթերցում: 2.Բառային աշխատանք: ԲԱ 1(էջ225): 3.Բանաստեղծության ազատ շարադրանք: 4.Պատմություններ շների մասին: 5.Կինոնկարներ և մուլտֆիլմեր շների մասին:	Խոսքի զարգացում:	Կենսաբանություն Կերպարվեստ Կինո Երաժշտություն		Մտազրոհ Խմբային աշխատանք Զբոսանք պատկերասրահում	Անգիր: ԲԱ 2,3 (էջ225):
192	12	Փոխաբերություն 1.Ի՞նչ է փոխաբերությունը: Նկարել փոխաբերություն: 2.«Մազաթափ գամփռն ու աշունը» 3.Առաջ. 1,2 (էջ227):	Պատկերավորման միջոցների ընկալման, գնահատման և խոսքի մեջ կիրառելու կարողությունների ամրապնդում:	Կերպարվեստ		Մտազրոհ T-աձև աղյուսակ Խմբային աշխատանք	Առաջ. 3,4 (էջ227):
193	13	Պատկերավորման միջոցներ. մակդիր, փոխաբերություն, համեմատություն 1. Տրված տեքստից դուրս գրել պատկերավորման միջոցները: 2. Տրված առարկան բնութագրել մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների միջոցով:	Պատկերավորման միջոցների ընկալման, գնահատման և խոսքի մեջ կիրառելու կարողությունների ամրապնդում:			Խմբային աշխատանք Խաղ՝ «Ճանաչի՞ր առարկան»	Կազմել տեքստ:
194	14	Արտադասարանական ընթերցանություն					
195	15	Հ. Թումանյանի քառյակները 1.Որևէ կենդանու ցավ պատճառե՞լ ես: Ե՞րբ և ինչու՞: Ջղջու՞մ ես... 2.Քառյակների ընթերցում և մեկնաբանություն:	Ճանաչողական դաշտի ընդլայնում, գիտելիքների հարստացում, արժեքային համակարգի ձևավորում:	Շրջասույթներ. Թումանյան Կրկն. Թումանյան, Հեքիաթներ, «Խոսող ձուկը» (5-րդ դաս.)		Խմբային աշխատանք	Անգիր:
196	16	Բնանկար: Բակունց. «Աշուն էր...» 1.Ի՞նչ դեր ունի նկարագրությունը գրականության մեջ: 2.Բնանկար: 3.Բնանկարի ստեղծման եղանակները գրականության մեջ: 4.Գեղարվեստական ոճով նկարագրության ստեղծում՝ մակդիրների, համեմատությունների, փոխաբերությունների օգտագործմամբ:	Գեղարվեստական ոճի տեքստերի մասին գիտելիքների խորացում և գեղ խոսքի ընկալման զարգացում:	Կերպարվեստ		Զբոսանք պատկերասրահում Խմբային շարադրություն	Անգիր: Դուրս գրել մակդիրները, փոխաբերություններն ու համեմատությունները:

197	17	Արտադասարանական ընթերցանություն					
198	18	Հ. Սահյան. «Ժայռից մասուր է կաթում» 1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բանաստեղծության ազատ շարադրանք: 3. Բանաստեղծության գաղափարական բովանդակությունը: 4. Պատկերային համակարգը:	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն: Ընթերցանության շնորհիվ յուրացված բառապաշարի օգտագործում սեփական խոսքում:	Կերպարվեստ		Քառաբաժան T-աձև աղյուսակ խմբային աշխատանք	Անգիր: Բանաստեղծության ազատ շարադրանք:
199	19	Ս. Անտոնյան. Երկու ծառ 1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բանաստեղծության ազատ շարադրանք: 3. Պատկերային համակարգը:	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն:	Կերպարվեստ		Քառաբաժան T-աձև աղյուսակ խմբային աշխատանք	Անգիր: Բանաստեղծության ազատ շարադրանք:
200	20	Վ. Տերյան. «Թողի երկիրն իմ հայրենի» 1. Բանաստեղծության ընթերցում: 2. Բանաստեղծության ազատ շարադրանք: 3. Պատկերային համակարգը:	Բանաստեղծության բովանդակային և լեզվաոճական վերլուծություն:	Կրկն.-Վ. Տերյան, «Աշնան», «Կարծել եմ ես տուն», «Չեմ դավաճանի իմ Նվարդին» Կերպարվեստ		Քառաբաժան T-աձև աղյուսակ խմբային աշխատանք	Անգիր: Բանաստեղծության ազատ շարադրանք:
201	21	Արտադասարանական ընթերցանություն					
202	22	Կրկնություն					